

Պ-713-24.08.2020-SՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «ֆինանսավորման կարգը» բառերից հետո լրացնել նոր նախադասություն.

«Ընդ որում՝ կարգը նախատեսում է կարգավորումներ նաեւ պայմանագրերի կատարման եւ կառավարման շրջանակում հանրային հսկողության իրականացման հնարավորության ապահովման եւ դրա կիրառման գործընթացի վերաբերյալ:»:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 5.1.-ին հոդվածով.

« Հոդված 5.1. Պայմանագրերի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողությունը

1. Պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեն՝

1) պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք.

2) պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները:

2. Անձը (ներկայացուցիչը) չի կարող մասնակցել գործընթացին, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում իր հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իր կողմից հիմնադրված կամ բաժնեմասնակցությամբ (փայմասնակցությամբ) կազմակերպությունը: Անձը (ներկայացուցիչը) ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում:

3. Գործընթացի շրջանակում անձը գործում է պատվիրատուի՝ պայմանագրի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող միավորի անունից, վերջինիս հետ համատեղ, պայմանով, որ անձի ներկայացրած դիրքորոշումը կրում է խորհրդատվական բնույթ: Պատվիրատուն ստացված դիրքորոշումները պարտադիր կարգով քննարկում է՝ գործընթացին մասնակից դարձնելով նաև պայմանագրի կողմին: Քննարկման ամփոփաթերթը հրապարակվում է տեղեկագրում: Եթե դիրքորոշում չի ներկայացվում, ապա դրա մասին պայմանագրի կատարման արդյունքի ընդունումը հիմնավորող փաստաթղթում կատարվում է համապատասխան նշում:

4. Պայմանագրերի կատարման, կառավարման շրջանակում հանրային հսկողությունը պարտադիր է գնումների բազային միավորը գերազանցող գին ունեցող պայմանագրերի դեպքում:

5. Գործընթացին մասնակցելու պայմանները և դիմելու ժամկետները սահմանվում են կնքված պայմանագրի մասին հայտարարությամբ, նկատի ունենալով, որ դիմելու ժամկետը չի կարող պակաս լինել երեք օրացուցային օրից:

6. Եթե միևնույն պայմանագրի շրջանակում անձի ներկայացրած դիրքորոշումը առնվազն երկու անգամ չի հիմնավորվում, ապա վերջինս զրկվում է տվյալ պայմանագրի շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու լիազորություններից, ինչի մասին պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

Հոդված 3. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած և չավարտված գնման գործընթացների վրա:

3. Սույն օրենքից բխող կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Փոփոխվող հողվածների վերաբերյալ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության, պայմանագրերի կատարման, կառավարման եւ ֆինանսավորման կարգը: Ընդ որում՝ կարգը նախատեսում է կարգավորումներ նաեւ պայմանագրերի կատարման եւ կառավարման շրջանակում հանրային հսկողության իրականացման հնարավորության ապահովման եւ դրա կիրառման գործընթացի վերաբերյալ, հաշվի անելով, որ՝

ա. այն պարտադիր է գնումների բազային միավորը գերազանցող գին ունեցող պայմանագրերի դեպքում.

բ. գործընթացին մասնակցելու հնարավորություն տրվում է պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցներին, իսկ պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցներին, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպություններին եւ զանգվածային լրատվության միջոցներին.

գ. գործընթացին մասնակցելու պայմանները եւ դիմելու ժամկետները սահմանվում են կնքված պայմանագրի մասին հայտարարությամբ, նկատի ունենալով, որ դիմելու ժամկետը չի կարող պակաս լինել երեք օրացուցային օրից.

դ. անձը (ներկայացուցիչը) չի կարող մասնակցել գործընթացին, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում վերջինիս կամ իրեն մերժավոր ազգակցությամբ կամ խնամիրությամբ կապված անձի (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաեւ ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը: Անձը (ներկայացուցիչը) ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում.

ե. գործընթացի շրջանակում անձը գործում է պատվիրատուի՝ պայմանագրի կատարման եւ կառավարման գործառույթն իրականացնող միավորի անունից, վերջինիս հետ համատեղ, պայմանով, որ անձի ներկայացրած դիրքորոշումը կրում է խորհրդատվական բնույթ: Պատվիրատուն ստացված դիրքորոշումները պարտադիր կարգով քննարկում է՝ գործընթացին մասնակից դարձնելով նաեւ պայմանագրի կողմին: Քննարկման ամփոփաթեթը հրապարակվում է տեղեկագրում: Եթե դիրքորոշում չի ներկայացվում, ապա դրա մասին պայմանագրի կատարման արդյունքի ընդունումը հիմնավորող փաստաթղթում կատարվում է համապատասխան նշում.

զ. եթե միեւնույն պայմանագրի շրջանակում անձի ներկայացրած դիրքորոշումը առնվազն երկու անգամ չի հիմնավորվում, ապա վերջինս զրկվում է տվյալ պայմանագրի շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու լիազորություններից, ինչի մասին պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն. »:

4-րդ կետում «Ֆինանսավորման կարգը» բառերից հետո լրացնել նոր նախադասություն.

«Ընդ որում՝ կարգը նախատեսում է կարգավորումներ նաեւ պայմանագրերի կատարման եւ կառավարման շրջանակում հանրային հսկողության իրականացման հնարավորության ապահովման եւ դրա կիրառման գործընթացի վերաբերյալ. »:

Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 5.1.-ին հոդվածով.

« Հոդված 5.1. Պայմանագրերի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողությունը

1. Պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեն՝

1) պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք:

2) պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները:

2. Անձր (ներկայացուցիչ) չի կարող մասնակցել գործընթացին, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում իր հետ մերժավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձր (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իր կողմից հիմնադրված կամ բաժնետնասակցությամբ (փայլամասնակցությամբ) կազմակերպությունը: Անձր (ներկայացուցիչ) ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում:

3. Գործընթացի շրջանակում անձր գործում է պատվիրատուի՝ պայմանագրի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող միավորի անունից, վերջինիս հետ համատեղ, պայմանով, որ անձի ներկայացրած դիրքորոշումը կրում է խորհրդատվական բնույթ: Պատվիրատուն ստացված դիրքորոշումները պարտադիր կարգով քննարկում է՝ գործընթացին մասնակից դարձնելով նաև պայմանագրի կողմին: Քննարկման ամփոփաթեթը հրապարակվում է տեղեկագրում: Եթե դիրքորոշում չի ներկայացվում, ապա դրա մասին պայմանագրի կատարման արդյունքի ընդունումը հիմնավորող փաստաթղթում կատարվում է համապատասխան նշում:

4. Պայմանագրերի կատարման, կառավարման շրջանակում հանրային հսկողությունը պարտադիր է գնումների բազային միավորի գերազանցող զին ունեցող պայմանագրերի դեպքում:

5. Գործընթացին մասնակցելու պայմանները և դիմելու ժամկետները սահմանվում են կնքված պայմանագրի մասին հայտարարությամբ, նկատի ունենալով, որ դիմելու ժամկետը չի կարող պակաս լինել երեք օրացուցային օրից:

6. Եթե միևնույն պայմանագրի շրջանակում անձի ներկայացրած դիրքորոշումը առնվազն երկու անգամ չի հիմնավորվում, ապա վերջինս զրկվում է տվյալ պայմանագրի շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու լիազորություններից, ինչի մասին պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

Հոդված 2. 3.Եզրափակիչ եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած եւ չդադարած, ինչպես նաև կնքված եւ գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած և չավարտված գնման գործընթացների վրա:

3. Սույն օրենքից բխող կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Ա Մ Փ Ո Փ Ա Յ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈՂ՝ Պ-713-24.08.2020-SՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջար- կությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	Ած պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի 1-ին հոդված	<p>Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.</p> <p>Հոդված 1. «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «Ֆինանսավորման կարգը» բառերից հետո լրացնել նոր նախադասություն.</p> <p>«Ընդ որում՝ կարգը նախատեսում է կարգավորումներ նաեւ պայմանագրերի կատարման եւ կառավարման շրջանակում հանրային հսկողության իրականացման հնարավորության ապահովման եւ դրա կիրառման գործընթացի վերաբերյալ:»:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
2	Ած պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի 2-րդ հոդված	<p>Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 5.1.-ին հոդվածով.</p> <p>«Հոդված 5.1. Պայմանագրերի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողությունը</p> <p>1.Պայմանագրի կատարման և կառավարման շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու իրավունք ունեն՝</p> <p>1) պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում՝ ինչպես գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած հասարակական կազմակերպությունները և լրատվական գործունեություն իրականացնող անձինք.</p> <p>2) պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնման տվյալ գործընթացին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցները:</p> <p>2. Անձը (ներկայացուցիչը) չի կարող մասնակցել գործընթացին, եթե պայմանագրի կողմ է հանդիսանում իր</p>	Ընդունվել է	Ընդունվել է

			<p>հետ մերժավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր), վերջիններիս կամ իր կողմից հիմնադրված կամ բաժնենասնակցությամբ (փայամասնակցությամբ) կազմակերպությունը: Անձը (ներկայացուցիչը) ստորագրում է շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում:</p> <p>3. Գործընթացի շրջանակում անձը գործում է պատվիրատուի՝ պայմանագրի կատարման և կառավարման գործառույթն իրականացնող միավորի անունից, վերջինիս հետ համատեղ, պայմանով, որ անձի ներկայացրած դիրքորոշումը կրում է խորհրդատվական բնույթ: Պատվիրատուն ստացված դիրքորոշումները պարտադիր կարգով քննարկում է՝ գործընթացին մասնակից դարձնելով նաև պայմանագրի կողմին: Քննարկման ամփոփաթեթը հրապարակվում է տեղեկագրում: Եթե դիրքորոշում չի ներկայացվում, ապա դրա մասին պայմանագրի կատարման արդյունքի ընդունումը հիմնավորող փաստաթղթում կատարվում է համապատասխան նշում:</p> <p>4. Պայմանագրերի կատարման, կառավարման շրջանակում հանրային հսկողությունը պարտադիր է գնումների բազային միավորը գերազանցող գին ունեցող պայմանագրերի դեպքում:</p> <p>5. Գործընթացին մասնակցելու պայմանները և դիմելու ժամկետները սահմանվում են կնքված պայմանագրի մասին հայտարարությամբ, նկատի ունենալով, որ դիմելու ժամկետը չի կարող պակաս լինել երեք օրացուցային օրից:</p> <p>6. Եթե միևնույն պայմանագրի շրջանակում անձի ներկայացրած դիրքորոշումը առնվազն երկու անգամ չի հիմնավորվում, ապա վերջինս զրկվում է տվյալ պայմանագրի շրջանակում հանրային հսկողություն իրականացնելու լիազորություններից, ինչի մասին պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:</p>		
--	--	--	---	--	--

3	Աժ պատգամավոր Գևորգ Պապոյան	Նախագծի 2-րդ հոդվածը դարձնել հոդված 3	<p>Նախագծի 2-րդ հոդվածի համարակալումը դարձնել 3 և շարադրել նոր խմբագրությամբ.</p> <p>Հոդված 3. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ</p> <p>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:</p> <p>2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսած և չավարտված գնման գործընթացների վրա:</p> <p>3. Սույն օրենքից բխող կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:</p>	Ընդունվել է	Ընդունվել է
---	--------------------------------	---	--	-------------	-------------